Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99
K-15

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆ

N 6
N 57

ԱՆՏԻՊ ԵՐԿԵՐ

I.

1. ԹՈՒՐՔԻ ԱՂՋԻԿԸ.
2. ԲԱՐԵԿԱՄԻ ՄՕՏ.

Հրատարակութիւն
ԱՅՐԻ ԿԱՏԱՐԻՆԷ ԱԲՈՎԵԱՆԻ:

Գին 25 կոպ.

891.99
Ա-15

ԹԻՖԼԻՍ 1904
Տպարան „ՀԵՐՄԷՍ“ Միք. փող. № 81
(22)

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆ

1-98
-15
սպ.
13 MAY 2005
19 NOV 2010

ԱՆՏԻՊ ԵՐԿԵՐ

I.

1. ԹՈՒՐՔԻ ԱՂՋԻԿԸ.
2. ԲԱՐԵԿԱՄԻ ՄՕՏ.

Հրատարակութիւն
ԱՑԲԻ ԿԱՏԱՐԻՆԷ ԱԲՈՎԵԱՆԻ:

ԹԻՖԼԻՍ 1904
Տպարան „ՀԵՐՄԷՍ“ Միք. փող. № 81.
(22)

16.914

Дозволено цензурою. Тифлисъ, 23-го Апрѣля 1904 года

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՈ-Арм ССР
Հայ Մատենագրության
Ա. Մեսրոպյան անվան
5084-5

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ.

Ենթադրելով, որ Խաչատուր Աբովեանի թողած ամեն մի
ան կտոր, ամեն մի մտքի բեկոր հայ հասարակութեան հա-
իրբեւ թանկագին յիշատակ իւր նշանակութիւնը կ'ունենայ,
նկատի առնելով, որ սկեսարիս ծննդեան հարիւրամեակը
բարոյական պարտք է դնում մեզ վերայ այժմ վերջապէս
հասարակութեան առաջ դնելու այն բոլորը, ինչ որ Նրա
ատեւ կեանքում արտադրել է իւր գրիչը, ձեռնարկում ենք
անտիպ երկերի հրատարակութեանը, որ ծախսոր հանդամանք-
եւ նիւթականի պատճառով մինչեւ այժմ լուս չէր եկել, ե
իր ենք հետզհետէ բոլորն ի լոյս ընծայել։

Դժբախտաբար նրա գրական մնացորդներից շատերը կի-
են մեզ հասել եւ շատերը կորել են նոյնիսկ. կան բաներ է
զանազան անձնաւորութիւնների մօտ են, որոնց այսո
բարեաբար խնդրում ենք մեզ հասցնել այդ բեկորները, եթէ ո
ովին, գոնէ արտագրելու համար, որպէսզի կարելի լինի Ա
նի հատուածներն ի մի հաւաքել եւ կարելիին չափ ամբող
ւն կազմել։

Ցուսալով, որ այս առաջին փորձը հաւանութիւն եւ ընդու-
թիւն կը գտնի հասարակութեան կողմից եւ, որ գլխաւորն է,
ամանայ նրա աջակցութեանը, կ'շտապենք եւ միւս գրական
ներն ու մնացորդներն ի լոյս ընծայել։

ԱՅՐԻ ԿԱՏ. ԱԲՈՎԵԱՆ.

ԹՈՒՐՔԻ ԱՂՋԻԿԸ *)։

Ամառն էկել էր, սիրտս էլի մթնել։ Տարվան ոչ մէկ ժամանակը էնքան ինձ չի տանջում, ինչպէս ամառը։ Զմեռվան ցուրտը, բուքը, սառը եղանակը, չանգը՝ ղորդ ա՝ ծանր են մարդի համար, բայց հէնց արևը մէկ քաղցր աչքով որ մտիկ չանում, բոլոր տըխրութիւնը, բոլոր մեր սրտի մթութիւնն երկնքի հետ պարզում, անց ա կէնում,—ու ո՞վ չգիտի՝ որ ցուրտը մարդի մարմինը պնդացնում, զօրացնում ա։ Ո՞վ չգիտի, թէ որքան հիանալի ա աշխարքը, ինչպէս է մարդիս հոգին քաշում, վերացնում, զուարթացնում, երբ գարնան զովարար հովը փչում, սար ու ձոր իրանց մահուան քնից վեր կացնում, ձին ու սառից հալցնում, նոր հոգի, նոր կեանք տալիս բոլոր բնութեանը։ Ո՞ւմ սիրտը չի վերանում, զարմանում, աչքը ծովանում, երբ Մայիսի առաւօտը փանջարէն բաց անելիս տունը անմահական հոտով ա լցվում, օթախը՝ երկնային լուսով, անկաջը հազար տեսակ ձէնով, աչքը հօ էն ալվան ծաղկները ու կանաչ խոտերը որ չի տեսնում, ուզում ա թախտ, աթոռ, փառք, մեծութիւն, փափուկ տեղ ու

*) Երկու վերնագիր ունի. միան է «Զօրութիւն Պրոնի»։ Ս. Հր.

բարձ թողայ, ու դուս վազի, գետինն ու հողը լի
համբուրի, երեսին քսի, չօքի, Աստուած փառաբան
պառկի, անոյշ երազ տեսնի։ Ո՜վ, ա՜խ ով կուզէր,
էն թագաւորական լաջվարթ, ոսկեվարազ ամարաթ
էն սուփրէն ու սեղանը, էն սաղն ու քեամանչէն՝ ա
ձորի հետ փոխի, որ գարնան ժամանակին բացվո
հազար տեսակ ծաղկներով լցվում, զարդարվում
որ բիւր տեսակ թռչունք գլխավերևն են ծափ տալ
խայտում, ցնծում, երգում, պարզ, արծաթանման ա
բբրները աչքի առաջին են քչքչում, ու ճրագի պ
վառվում, օդը մէկ կողմից ա իր կենդանանար հո
փչում, ամպը միւս կողմից իր երկնային յօղը վեր ա
ծում։ Աշունքն էլ զորդ ա՝ իր ախրութիւնն ունի, մա
չի կարում սրտին հուսի տալ՝ որ հանգստանայ, գալ
չանի. չունքի բոլոր իր յոյսն ու մխիթարութիւնը, ի
գանձն ու դոլվաթը երկրին ա պահ տալիս և ձեռ
ծոցին կանգնում, ղրաղիցը մտիկ անում, որ տերևն
բը քիչ-քիչ դեղնում, թառամում, վեր են թափու
ծառերն իրանց պտղիցն ու զարդարանքիցն են զբրկ
վում, դաշտ ու ձոր իրանց կանաչ ռանկիցն ու ալվա
ծաղկներիցը։ Քամին մէկ կողմիցն ա իր դառը շունչ
ցոյց տալիս, ամպերը միւս կողմից իրանց նօթերը կի
տում, գլխները բարձրացնում, թնդվում, չարանում՝
ամա աշունքն ա, որ մարդիս դառն աշխատութեա
և քրտինքով դատած, վաստակած պտուղը հաս
ցընում՝ իրան ա տալիս, որ աչքը կշտանայ, սիրտը մը
խիթարվի, մարմինն էլ եղ զօրութիւն ստանայ, էլ և
ուրախ ուրախ իր ազնդին մտիկ անի, ու յոյսը չի կոր
ցնի, թէ նրա աշխատութիւնը ձնի ու սառցի տակի
կթթին, կփչանան, իր աչքը մէկ խէր չի տեսնիլ։—

Բայց ամառը, տօթագին, կրակ ամառը, զորդ ա՝
մեր պտղները հասցնում, մեր սիրտն ումուդ ա քցում,
բայց մեր հանդերն էլ հետն ա չորացնում, մեր աղ-
բբրներն ու գետերն էլ հետն ա ցամաքցնում, էրում,
խաշում, երկրի երեսը, դաշտի խոտն ու ծաղիկն ան-
ձողի պէս սևացնում, խորովում ու շատ անգամ՝ որ
սիրտդ ու բերանդ բաց ես անում, որ շունչ առնիս,
կրակ ա գլխիդ վեր գալիս, կրակ բերանդ թափում,
բոց ոտիդ տակին վառվում, ցօղի ու հովի տեղը մահ-
ուան տաք քամին երեսիդ փչում, շունչդ կտրում, ա-
րինդ ցամաքացնում։

Էսպէս մէկ ամառվան օր էր, որ քաղաքի շոքն
ու կրակը շունչս բերանս էր հասցրել, ինձ խեղդում էր,
որ գժվածի պէս ընկայ փողոցէ փողոց, քուչայ քուչայ,
որ գնամ մէկ հով տեղ գլուխս վեր դնեմ, մի քիչ շունչ
առնիմ։ Շատ անգամ՝ որ ամառը թուլանում, ինձանից
գնում էի, ուզում էի գլուխս մահու տամ, որ պրծնիմ
էս դառն աշխարքիցը, հէնց կարծում էի՝ թէ ես եմ մե-
ղաւորը, ես եմ չար անօրէնը, որ էլ աշխարքի չէի կա-
րող պէտք գալ, ուզում էի շուտով էլայ ոտս քաշիլ, գը-
նալ։ Գիշերն երազն էր ինձ տանջում, ցերեկը իմ մտ-
քը, իմ չար միտքը։ Աստուած, երկինք, դժոխք, ար-
քայութիւն, սիրելի, բարեկամ սրտիցս էնպէս էին քաշ-
վում, ջնջվում, որ հէնց իմանում էի՝ թէ էս գինուին
ինձ մէկ չարայ չի ելել։ Քարերն ու անբան անասուն-
քն էլ աչքիս գրօղ էին երևում։ Ամէն մէկ ոտս փո-
խելիս՝ ամեն մէկ շունչս քաշելիս՝ էնպէս էի կարծում,
թէ հազար թուր սիրտս են խրում, հազար ձեռ գլխիս
բռնցկում, հազար թշնամի եղկիցս վազում, երկինք ու
երկիր գլխիս փուլ գալիս՝ որ ինձ տակով անեն։ Ում

մէկ ծանր խօսք էի ասել, ով ինձ մէկ խէղ աչքով նայել էր, ինչ բարեկամից թուղթ էի ստացել, պատասխանը չէ՛ գրել, ինչ մաքուսս գրել էի ու չէի կատարել, աշակերտի էի նեղացրել, ծառայի էի մէկ թթջուղաբ տվել, ծառայութիւնս չէի օրինաւոր կատարել, եա մէկ գործ էս օր վաղը քցել, բոլոր, բոլոր գալիս առաջիս կանգնում էին ու հոգիս էլ՝ որ՝ ասում էի տամ, հէնց իմանում էի, թէ էլի ինձանից ձեռք չեն վերցնիլ, էլի հոգս նրանք կհանեն կրակ կտան, բարեկամք ինձ երախտամոռ կկանչեն, գլխաւորք ինձ ծոյլ անպիտան կհամարեն, ամէնն էլ կուրախանան, որ ինձանից շուտով պրծան։ Որ լսում էի՝ թէ մէկ մարդի պատիժ տվին, եա բանդը քցեցին, որ ասում էին՝ թէ՝ Ռուսաստանիցը մեծ մարդ ա էկել, որ մեր երկրի ահվալն քննի իմանայ, որ կուսակալիցը, եա նախարարիցը (մինիստրիցը) մէկ թուղթ էր գալիս, որ կառավարութիւնիցը (գերեկցիցը) ստորոժը գիրքը կըռնատակին աչքիս չէր երևում, էնպէս էի սարսափում, կարծում, թէ էս ա, իմ վերջի օրը հասել, մօտացել ա, իմ արած չարութիւնը լիս ընկել, Պետերբուրգ, Մոսկով, Թիֆլիզ ինձանից գանգատով լցվել են, իմ բարեկամքը ինձանից ձեռք վերցրել, իմ թշնամիքը ինձ մատնել, ինձ պէտք է տանեն սաղ սաղ թաղեն, եա կախտան։ Աստուած իմ թշնամուս չի՛ տայ էսպէս սիրտ, էսպէս միտք։ Երևակայութիւնը մարդիս ի՞նչ դժոխքը չի՛ տանիլ, եղ բերիլ։ Ինձ պահողը հէնց էս էր՝ որ ասում էի՝ թէ մաքուժդ գրել ես ազգին պէտքը գաս, մէկ ինչուն թողաս, կմեռնիս, մէկ վրէդ կանգնող, ողորմի տվող էլ չի՛ ըլիլ։ Ապրիր՝ որ ասածդ անես, ժուրագդ առնիս։ Է՛ս, էս էր ինձ ամէն դժոխքից, պատուհասից ազատում,

հոգիս եղ բերում, թէ չէ Քուռը վաղուց կըլէր իմ գերեզմանը։ Լսող, կարդացող՝ թող ինձ զնամիշ չանեն՝ որ իմ մեղքս իմ բերնովս եմ խոստովանում։ Մարդ իրան սիրտը որ փակի, ո՞վ կիմանայ, ո՞վ կզգայ՝ թէ նրանում ի՞նչ կայ։ Բայց էսպէս դժոխք սիրտ՝ Աստուած ո՞չ տայ, ո՞չ ստեղծի։—

Մէկ օր էլ էս կրակը ջանս էր ընկել, սիրտս էրում, փոթորում, ինչպէս ասեցի, որ տանից, տեղից դուս ընկայ, ու դէպի թագաւորական՝ բաղնիսների եղեի բաղը երբվիշ էլայ։ Քուչայ, փողոց գերեզմանատուն էր դառել։ Երկնքիցը կրակ էր վեր թափում, երկիրը տաքացած պղնձի պէս ոտիս տակը կրակում։ Ամէնը քուն կամ ջուր կրող էին մնացել էս մեռլատան քնակիչն ու շունչ քաշողը, որ իրանք էլ գերեզմանից դուս քաշած տարիր տարվան մեռլի պէս շունչ ու ռանկ կորցրած՝ կամ կիսաջան ոտը ոտի առաջն էլին դնում, կամ մէկ բարի վրայ նստում, շունչ քաշում, գտակները վերցնում, քրտինքները սրբում, կամ թէ ճխ ու ճխ քաշելով, դէս ու դէն տմբտմբալով, օրօրվելով իրանց համփէն գնում։

Իմ բախտիցը թագաւորական բաղի դուռը բաց էր։ Մտայ ներս, բաղմանչուն գլուխ տվի. սուտ, որ ինչ ա, չբարկանայ ու ծառին, քօլին մտիկ տալով, ընկայ դարբդուս, որ կարծիք չտանի, թէ բան կգողանամ։ Հասարակ մարդիքը ինչպէս արդար են ու պարզամիտ։ Էնպէս էի անում, որ իմանայ՝ թէ ես մէկ գիտուն մարդ եմ, գնացել եմ, որ սար ու ձորին մտիկ տամ, եա սիրտս բացվի, եա մէկ նոր շնորք վեր առնիմ։ Բոլորը մանայ էր։ Աստուած որքան ողորմած ա, որ մարդիս

էնպէս սիրտ ա տվել, որ փոքը բանով էլ, խակոյն ի
տրտմութիւնը ցրվում, միտքն ուրիշ տեղ ա քցում։ Ո
գոստոս ամիսը։ Հաւողի ճթերը հազար տեղից կախ ընկ
կած, ես էլ մրգի գերի, փորի գերի, ով ըլի, որ սըր
տի ծէրը չէրի։ Քարափի տակի ընկուզի ծառն ու հա
ւուղը աչքիս տակն էի առել, ու դէմը գնում, դէմը աչ
քըս եդևը, չորս կողմս քցում, որ տեսնեմ, թէ բաղ
մանչին հօ չի գալիս, ծառերի տակին հօ մարդ չկայ
որ ինձ տեսնի։ Հարամ ըլի էսպէս ասն էլ, էսպէս ի
տանն էլ։ Մեր փորը փոր չի, ջրհոր ա. ձէն տաս, ձէ
չի տալ. ինչ տիլ ու ախպ միջիցն էլ հանես, իստակեր
էլի միւս օրը իրան իրան կլցվի, ընչանք տէրը հանդ
հունդ կանի։ Ինչ և իցէ աչքդ ուզածդ չտեսնի, թէ չ
սիրտդ՝ չաքուշն առած, գլխիդ կանգնած ա, կտա
շնորհակալութիւն չանիլ, չես տալ, գլուխդ կպատռվ
լաւն էն ա, որ մարդու ոչ աչքը բան տեսնի, ոչ սիրտ
ուզի։ Ամա էդ էս աշխարքումը ոչ պատահել ա, ո
կպատահի։ Քանի աչքդ բաց ա, փակ չի, մէջքդ լեռ
շլինքդ վրէն, ինչքան ուտես, էնքան կուզես։—

Ա՜խ՝ ի՞նչքան խոր ա մարդիս սիրտը, ի՞նչքա
անքննելի, անիմանալի։ Մէկ բոպէից առաջ կրակ է
գլխիս վեր թափում, գետինը բերանը բաց արել, ին
ուտում, ամպ ու կայծակ փորումս հազար տեղից տրա
քում, լերդս ու թոքս կրակ տալիս, հիմիկ բոլորն, բո
լորն կտրվեց, վերջացաւ, գարնան օրվան պէս պար
զեց, լուսացաւ, երեխութիւնս միտս ընկաւ, բաղման
չին տուն մտաւ, հաւողի չաղ չաղ, սև սև ճլվկոտ
ճթերը ցրվեցին սրտիս հոքսն ու ցաւերը, ու նստա
տեղիցս, ընկուզու տակիցը հարիր անգամ շլինքս եր
կարացրի, էլ եդ քաշեցի, ծղլուրդ էլայ, ծլունկ էլ

ու Աստուծոյ փառք, մարդ չտեսաւ։ Պատիկ ժամանակս
բոստան շատ էի կտրել, Քանաքռցոնց աւելի անունը
հօ՝ Երևանումը տանձագող են կանչում։ Տանձ չըլի հա-
ւող ըլի. հէսաբի բան չի. ատամներիցդ չեն իմանալ,
փորիցդ չեն հարցնիլ։ Բայց վայ նրան, որ փորձանքի
կպատահի, կերածն էլ մարսածն էլ քթովը կհանեն։
Երեխէք, ձեզ եմ ասում, ձեր արևին զուրբան՝ արածս
չանէք, թէ չէ կփոշմանէք։

Բոստան գող գնալիս, կամ տանձ գողանալիս՝
ղորդ ա, քօթակ շատ էի կերել, ամա էլ եդ մոռացել։
Երեխին շաքար տուր ձեռը, թէկուզ հարիր անգամ
գլխին բռնցկի, հարիր փէտ էլ ոտին խփի, էլի մէկ
սհաթից յետոյ ցաւը կմոռանայ, բերանը կքաղցրա-
նայ։ Ամա մեծին ի՞նչ անես, որ էսպէս ջահելութիւն
անի։ Սիրիր չեն տանիլ հաւողի խաթեր, ամա վրէն
կծիծաղին տեսնող լսողներ։ Թող՝ ինձ վրայ ծիծաղին,
որ ուրշները վախին, չամաչին։ Հազար անգամ թուր
ու մուր, մէկ անգամ օրինակ տուր. էս մէկը շատ բան
կտեսնի, քանց մէկ կարաս խրատ, մէկ ջվալ դարբհաթ։

Մատներիս ծէրերը դառել էր ինձ համար թառ-
լանի թև. եաւաշ, եաւաշ փէշերքս էլ վեր քաշեցի՝ որ
թրջի, քօլի չդիպչի, չխշշայ, ուսուլով վեր էկայ ու
հաւողի բարունակի տակը մտայ։ Եզովբոսի աղուէսը
ինչպէս էր իր ագռաւի պանրին մտիկ անում, էնպէս
էի ես էլ իմ հաւողի ճթերին նայում։ Բայց վազը անկաջ
չունի, որ խաբվի, ով ուզէնայ քաղի, պէտք է ոտները
հանի, ծառը նի ըլի, սատանական էսպէս բարձր էր՝
իմ սիրուն, իմ ուզած հաւողի վազը։ Լերդս կատիկս
էր թռել, շունչս բերնիս դէմ ընկել, թուքս չորացել,
երեսս թան դառել, էլի անիրաւ փորս իր զուռնէն

էր փչում ու նեքսևիցը հարայ տալիս, գոռում, դոռում։
Դէս ու դէն մէկ էլ աչքս քցեցի ու եալահ՝ վազնըվեր
շուլալվեցի. ինչ կըլի, կըլի՝ մտքումս ասեցի։ Ձեռս ճը-
թին հասաւ, ջանս դող ընկաւ, ամա բանը որ թարա-
գայ. սատանէն ինչ անի, մահանէն ինչ։ Կոթին էի զո-
տալիս, գիլէքն էին լալիս. զվարթ էի փորձում, ճիթը
սաղ սաղ հալչում։ Ա՜խ՝ էն հաղարին թէ մէկ շխպիկ
(դանակի կտոր) էր ձեռս ընկել, հազար անգամ կպա-
չէի, ճակատիս կդնէի ու ալմազէ թրի հետ չէի փոխիլ
էն էլ չկար, սատանին նալաթ։ Տօ սատանէն ինչ անի,
ինձ մէկ ասող ըլի. էսպէս ա. լեզվընեբս ոսվորել ա,
մենք գոփում ենք, սատանին դմփում։ Ախր ով չուզի՝
որ մէկ զօթուր էշ էլայ՝ ունենայ, որ ընկած տեղը, բեռը նը-
բա քամակին դնի, ինքը դինջանայ։ Շատն էլ հօ՝ իրանք էլ
էն վրէն նստում, իշին բզում, թէկուզ ոտին անի, թէկուզ
գլխին, թէկուզ տրտինգ, թէկուզ տրինգ։ Իշի քամակը
բարակ, նստողի ոտները երկար, էլ ինչ կուզի թամը
ու օրդանգու։ Փալան էլ չըլի, բանդ երբմիշ կըլի։ Դու
քո բանը տես, ես իմ հաւողը քաղեմ, բեզ չթաղեմ. բա-
նըս շլոր էր, ճթի կոթը զօռ. քիչ էր մնացել էն չար
սհաթը, հաւողի վազը անիծելով վեր գայի, ատամներս
բերնումս եռացին—ախր բարկացած էի, չէ... Աչքդ
բարին տեսնի, զասարն իր մսին էնպէս վրա չի թըռ-
չում, ինչպէս ես իմ ճթին. բայց սև ըլի էն ճիթն, ինչ-
պէս սև էր. իմն ինձ հասաւ, դուշմանիդ գլխին չգայ։
Փիս բանն էսպէս ա, ինչքան ծածուկ էլ մարդ գոր-
ծում ա, էլի էնպէս ա իմանում, թէ իր շվաքն էլ ա
իրան ուտում, ինչպէս իմն ինձ կերաւ։

Հէնց ատամս ճթի կոթին հասաւ, հէնց մէկ ղըբ
ճըտացրի թէ չէ, թուփը որ տակիս բէղաֆիլ չխշշաց

ու մէկ թրփթրփոց անկաջս չընկաւ, ճութն իր տեղը
մնաց կախ ընկած, ես գետնի վրայ գլուխս շղմած էն-
պէս կոլոլվեցի, վեր ընկայ, գետինը որ պատռել էր,
ինձ ներս տարել, անիծած ըլիմ, թէ էնտեղ էլ խունկ
ու մոմ չէի առել, վառել, ծխել, մխել, ես չի՛ չօքել՝
սատանին ուխտ արել՝ որ ինձ պրծացրեց. չունքի սա-
տանական գործքի եղևիցը ման էկողը սատանի դուռը
պտի գնայ, որ սևերես չմնայ, ու սեն սպիտակին չի՛
սիրիլ, սպիտակը սևին, էրնակ իմ սև օրին. էս օր
սատանի աչքը քաղցր էր ինձ վրայ. հա կաց ու քէֆ
արա.—Հէնց իմանում էի, թէ ինձ կապեցին, թոգեցին,
երեսս մուր քսեցին, գլխս ջուր ածեցին, աչքերս
սևացել էր, ոտներս քարացել, բայց ամէն զօսթ, դուշ-
ման էն բարի սհաթին ոսստ դան, ինչ ինձ ոսստ
էկաւ. եդ մտիկ տամ, տեսնիմ, որ մէկ զօմփօռ շուն
մէկ սև կատվի հետ ածաւ։ Դէ՛. հա՛ կաց ու չախսէ
վախսէ կանչիր. թիերն էլ հետս ծափ տվին, ցնծա-
ցին, ծառերն էլ վրէս ծիծաղեցին, տնազ արին, որ
մէկ եքայ մարդ՝ մէկ կատվից էսքան վախեցաւ, լեզ-
պատառ էլաւ։ Հէնց նրանց ջգրու էլի ոտ ու գլուխ
հաւաքեցի, էլի իմ վազիս խոտեցի ու գլխին նստեցի։
Կատվից... շանից... մարդ վախենայ... կերած հացը
հարամ չի՛ էնպէս մարդի։ Ա՜խ սիրելի՝ կատուն ով
ա, շունն ով. փիս մարդի խղճմտանքը, խղճմտանքն ա
իրան չանգռում, իրան կծում, փիս գործքի փրին նա-
թաթ։—Ատամներս իրանց բանը տեսան, փորս իր մու-
ռազն առաւ, ոանկս տեղն էկաւ, հանաքն անց կացաւ,
սերանս քաղցրացաւ, ջանս դինջացաւ։ Էլ ահ ու դող
չունէի, ուզածս արել էի, մեղքս գործել. ծառը չէր ա-
սիլ, ես էլ հօ՝ էլի ինչպէս մէկ մարդ բանից բէխաբար,

վազին էլ չէի մտիկ անում, որ իմ արդարութիւնը կարծիք չտայ. ընկայ էլ եղ սարնըվեր, սարնըդուս ու էկայ մէկ կանաչ տեղ նստեցի, աչքս Թուրքերի գեոխանին քցեցի։ Ա՜խ՝ ինչ կըլէր որ չէի արել, ու տուն գնացել։

Էլ եղ շոքը զօռ արեց, տաք քամին երեսիս փըչեց, սրտիս չոր քամին լերդիս ու ջիգեարիս, էլ եղ տարորեց, էլ եղ միտքս ու սիրտս՝ ինչպէս մէկ կատաղած ծով իրարոցով քցեց։ Քարափի բրջերը մէկ կողմիցս էին գլխընները բարձրացրել, լուռ, մունջ մըտիկ տալիս, գեոխանի գերեզմանաքարերը առաջիս լռվել, պապանձվել, չոր, երված, խորովված սարն ու ձոր մէկն իր մեռած գլուխը ցոյց տալիս, միւսն իր ճոթռած սիրտն ու զօշը։ Լազգի, Թուրք, Ղզլբաշ, Օսմանցի մէկ կողմիցն էին Թվանքի, Թօփի գիւլլին զօռ տալիս, գոռում, Հայ, Վրացի, Օս, Փշաւ, Իմերէլ միւս կողմիցը՝ իրանց կրակը բաց արել՝ էկողին ջարդում, մօտանողին գիւլլախորով անում, հասնողին եա գլուխը փորը խրում, եա իրան սաղ սաղ բերդը քաշում։ Ղշղրուն, հարայ հրոցը, ձէնը ձորը անկաջ էին խլացնում։ Սար ու ձոր դրմբում, դրնգում, մարդի ուշ ու միտքը գլխիցը Թռցնում էր։ Որի մաղիցն էին բռնել, քաշ տալիս՝ որի թևիցը ձգում կախ տալիս, որը որդու եղբիցն էր լալիս, որը գլխին վեր հատում՝ սիրելուն տանելիս։ Դատն ժամանակ, գնաս ոչ եղ գաս։

Գեոխանումը փոր են փորում։ Հալբաթ մեռելպէտք է Թաղեն։ Թուրք ըլի, Աստուծոյ պատկեր չի. մեռելին տեսնողը բաս սոնուբ չանիլ, կծիծաղի։ Հրէն քարը նաշը դուս էկաւ։ Մօլլէքն առաջին են տխուր, գլխըները կախ քցած՝ գնում։ Շարական, ժամ չեն ասում,

բայց ախ, ինչպէս են գլխներին ծեծում, ինչպէս կուտաղ կուտաղ գալիս, իրանց ջարդում, սպանում։ Մէկը մաղերն ա ցրվել՝ ձգում, պոկում, մէկը դօշը բաց արել՝ կրծատում, իր միսն ու արինը վեր ածում, ու ամէն մէկ սրտաքօքին, գլխին տալիս՝ քարերն էլ են ձէն տալիս, զարզանդում, մղկտում, քարափներն էլ։ Մէկը դէմը պար գալիս՝ խանչալ ու Թուր հանած, ձեռին բռնած, դէմը ընկնում գեոնի վրայ, մէյլի առաջին Թաւալ Թաւալ տալիս, ոտ ու գլուխ քարերին ծեծում։ Մէկը բայաթի կանչում, երեսը դուս ճոթռում, մէկը գլուխն առել՝ վազում, որ քարափնը վեր ընկնի, չէն Թողում, ձեռիցը բռնում, եղ քաշում։ Նաշը ֆորի բերանը հասցրին. Արարիչ՝ ինչպէս լռվեցին բոլոր։ Մօլլէն աղօթք ա անում. աղօթքը բերան ու սիրտ փակէց, դարդն ու կրակն հանքցրէց. չէ։ ով սաղացրեց, ով բժշկեց էս բոպէի միջումը։ Մեռելի հոգու համար աղաչանք են անում. ինչ աղդ իր աղօթքին էնպէս արի, էնպէս ճիշդ, էնպէս ջերմեռանդ ա, ինչպէս Մահմէդականը։ Մօլլէն կարդը կատարեց, պրծաւ, մէյիդը գերեզմանն են գնում, ով անկաջ ունի, Թող խլանայ, էս լացին, էս արտասունքին, էս կսկծալուն, էս մղկտալուն քարը չի դիմանալ։—Խաղաղութիւն հոգուդ հանգուցեալ մարմին, այ իմ պատկերակից հողածին։ Հաւատներս մէկ չի, սիրտներս հօ մէկ ա, մեր ժամը չէիր գալիս, մէկ երկնքի տակի, մէկ երկրի երեսի էիր հօ ինձ հետ կէնում, ման գալիս. լեզուդ իմը չէր, պատկերդ, հոգիդ հօ իմիցն էր։ Տէրտէր չի Թաղում, մօլլէն էլ հօ աղօթք անում, չի հայհոյում։ Խաչ, աւետարան չկայ վրէդ, միևնոյն հողի տակը չենս մտնում, ուր որ ես էլ պտի մտնեմ։ Խունկ ու

մում չեն վառում, չեն ծխում, մկամ ճչք չի, որ վրէդ լալիս ա, սիրտ չի՞, որ քեզ համար էրվում ա։ Բաս ես քաբի պէս պտի քեզ նայիմ, որ Քրիստոնեայ եմ, ու աչքս չխփեմ։ Գնա. ով մեզ ստեղծել ա, էն բարի Ա-բարիչը որ քեզ էլ ինձ հետ իր լուսովը լիս էր տալիս, իր քաղցր աչքի տակին պահում, քեզ համար էլ ունի տեղ, բնակութիւն, որ քո վարձքն էլ տայ։ Երկնքի վարձքն ու փառքը բարեաց համար ա։ Թէ բարի էիր, չես կորչիլ։ Գնա, երկիրը քեզ էլ մօր պէս անփորձ կպահի մինչև գալստեան օրը։

Բայց ա՛խ՝ մեռելատէրերը հօ գնացին, հօ սար ու ձոր դինջացան. էս ի՞նչ նոր ձէն ա, որ անկաջս ա ընկնում, սիրտս խորովում։ Երազ չի՞ տեսածս, օրը ճաշ արեգակն առաջիս։ «Անա (մայը) ջան, անա, գէօղմ անա, ջանմ անա. աչքերիցս արին ա գնում, սրտումս կրակ ա վառվել, ի՞նչ կըլի, որ Աստուած հոգիս առնի, որ էա քեզ մէկ էլ տեսնիմ, էա հողը մտնիմ պրծնիմ։ Անա ջան, անա, կրակ ա վեր թափում գլխիս, ձէնս լսող չկայ. դու էդքան մօտիկ, ինձ մէկ ջան ասող, հայս հարցնող չկայ։ Ձէնս անկաջդ ա ընկնում, ազիզ ջան, դու էդտեղ էրվում, ես էստեղ. բայց ա՛խ, էրար սուք լսում ենք, իրար չենք կարում տեսնիլ։ Ա՜խ՝ ընչի՞ չի՞ աչքս քօռանում, ընչի՞ չեմ գետինը մտնում։ Ա-թա՛ (հայը) անխաթի աթա. ճամփէդ քօռ ըլի, աթա. էս ո՞ւր բերիր ինձ, էս ո՞ւր քցեցիր ողորմելուս. էս ի՞նչ թուր ցցեցիր սրտումս, որ կտրատում ա, բայց ա՛խ, վա՛խ, չի՞ սպանում, չի՞ վերջացնում, որ քո երեսիցը, քո դառն երեսիցը, քո անասուած ձեռքիցը պրծնիմ մէկ ՀՐ առաջ, ու ես էլ էս մեռելների դաշտումը պարկիմ... Աթա՛. աթա՛... անա՛. անա՛... հարազ...

դաթ...» էս ձէնն էր՝ որ շոքի բերանն ընկել, սար ու ձոր ժղկոտացնում—էն էլ էսպէս ժամանակին, էս սնոթին, որ ղուշը տեղիցը չէր եռում. ծառերի տերևները՝ հէնց իմանաս՝ չորացել ըլին։ Ու ի՞նչպէս խորհրդաւոր ձէն—ի՞նչ անիմանալի խօսքեր։ Գերեզմանից չէր գալիս, լաւ էի իմանում։ Աչքս վրիցս թռել՝ էս սքացողին պտըրտում, ման էր գալիս, բայց քարափնները որ ձէն չէին տալիս, չէի իմանում՝ էրերն են ինձ խարում, թէ իմ միտքս։ Էսպէս մոլորած, շվարած մնացել էի, որ աչքս ընկաւ թագաւորական բաղի դիմացի խարաբէքանց վրայ, որ գեօղխանիցը երկու ոտ հեռու չի՞ ըլի։ Էնպէս տեղից էսպէս ձէ՞ն, որ խանաորդին մտիկ ա-նիլ էլ չի՞ ուզիլ։ Հէնց իմանում էի քաչկեր են խարաբէ-քանց միջին թախ կացել։ Աչքիս դեռ չէի հաւատում, որ գէջդանգէջ տեսայ, որ մէկ ջան՝ քարերի միջին նըստած՝ դէմը գլուխն էր ծեծում, դէմը դօշը կարատում։ Մէկ էլ որ լաւ մտիկ արի, ու անկաջս ինձ քաշեցի, ըոլոր կարծիքս վերջացաւ։ Ով ըլի, թող ըլի. սրա դարդը ընչանք չիմանամ, չեմ գնալ ըստեղանց, ասացի ու թև առայ։ Բայց ի՞նչպէս ճամփայ գտնիլ. բաղը մէկ դուռն ունէր, դէնը գնայի, պտի կրկին քաղաքը մըտնէի ու բաղնոցների գլխովը գայի էնտեղ հասնէի. ընչանք էն վախտը բալքի նա գնացած ըլէր։ Յետոյ... հօ շատ օր պէտք է մաշվէի, տանջվէի, որ նրա դարդը չիմացայ։ Բալքի թէ նրա դարդը իմացն աւելի՞ էր։ Եարալուն եարալվի սիրտը թէզ կհասկանայ։ Երկու պտիկ դուռն էլ կային, ամա կոխպած, ո՞ւմ ասեմ, ո՞ւմ խնդրեմ։ Էլի երեխութիւնս միտքս բերի. թէ գող էլ կանչեն՝ ասեցի մարդուն գողութիւնը հօ արել ես, պատոշ էլ թռիր, ընչանք եղբերդ կնանեն. դու էլ հօ ոտն

ՀՍՍՌ—Արմ.ՍՍՌ

ունիս, ձեռք էլ հետը, եա փախիր, եա կպիր. մէկ ճիր
հաւողի խաթեր հօ մարդ չեն սպանիլ։ Ասիլն, անիլը մէկ
էլաւ. ձորն առաջիս բաց էլաւ. լաւ էր, որ ոտս չկոտրը-
վեցաւ, չունքի պատը բաւական բարձր ա։ Ոտս էլ որ
կոտրվէր, չէի իմանալ, ջանս էնպէս տաք էր։ Մէկ քա-
նի լոք էլ որ տվի, խարաբէքն առաջիս կանգնեցին. ի-
սքացողին աչքս տեսաւ. բայց իրեք գօմփօռ շուն էն-
պէս վրայ էկան ինձ, որ ուզում էին երեսս վեր բերին
Շան հետ վաղուց էի բաղումը հէսաբս դրստել ու իմ
օրումը շանից չեմ վախեցել, չեմ էլ վախենալ. բայց
ում ուզում էի, ալբէալ գիւմ էլաւ։

Ռսի սերթուկը հաքիս, շապկէն գլխիս, երեսս ան-
միրուք, ես տղամարդ, խաչապաշտ, նա աղչիկ Մահմէ-
դական, բաս ի՞նչ կանէր, որ չէր փախչիլ։ Բախտից
քարեր շատ կային. շները դէն արի, խոկեցի, ես խա-
բարի առաջին հասայ, կանգնեցի, բայց հիմիկ եմ իմա-
նում արած գժութիւնս ու զարդանդում. Մահմէդական-
նի, Ասխացու տունը օրը ճաշին աղչկայ եդևից ընկնի,
էնպէս դրաղ տեղ, Ռսի շորով՝ ով պէտք է ձեռը բռնի
որ տան տէրը փորդ վեր ածի, եա գիւլլէն սրտումդ
ցցի. ի՞նչ ա պատահել։ Քաղաքումը դաբուլ չեն անիլ
Հայ Քրիստոնէն չի տանիլ, ոուր մնաց չօլումը, էն է
Մահմէդականի տան։ Ի՞նչ անես, բանը բանից անցաւ
էր կացել, ես դան առաջին կանգնել, շլինքս ծռել
շորերս էլ որ հին ըլէր, հէնց կիմանային հաց եմ ու-
զում, եա ջուր։

Բաջմ (քոյր իմ), սկսեցի թուրքերէն ասիլ ու
գլուխս տան դռնովը ներս տանիլ, բաջմ, թէ չար մրտ-
քով ըլիմ էստեղ էկած, ոչ էսպէս գեօռ, էսպէս մէ-
բուռը հող աշխարքումն ինձ փայ ըլի։ Հայ եմ, Եւրո-

պացի չեմ, քո երկրացի, քո համշարի, մէկ հողի,
մէկ Ջրի որդի։ Քո կսկիծը, քո ձէնն ինձ էրեց՝
բաջմ. ջանս ուզես, քեզ կտամ, գլուխս ուզես՝ կծախեմ։
Ես չեմ էկել, որ քեզ ինջմիշ անեմ, քո եարափալու փա-
բալու սրտին դհայ աւելի ցաւ հասցնեմ։ Իսանաորդին
որ խսանաորդու սուքը տեսնի, ու դարդ չանի, արտա-
սունքը տեսնի, ու ինքն էլ լաց չըլի, ձէնը, էն ողբ-
բալի ձէնը լսի, ու ինքն էլ հետը չմղկտայ, նա էլ ի՞նչ
Աստուած կունենայ, ի՞նչ հոգի, ի՞նչ հաւատ։ Քո դինը
ու մասաբը գիտենայ, ա՛յ, էս երկինքը՝ որ գլխընե-
բիս կանգնած ա, էս արեգակը, որ մեզ լիս ա տալիս,
էս հողը, որ մեզ մէկ օր երկուսիս էլ պտի թաղի, բա-
ջի՝ Աստուած, երկինք վկայ են, որ ես ուրիշ մտքով
չեմ առաջիդ կանգնել։ Կուզես դուռդ վրէս փակիր, թէ
ամաչում ես, եա վախենում, կուզես՝ թող՝ ես գնամ,
դրաղ կանգնիմ. երեսդ կալ, աչքդ փակիր, ու հեռու
տեղանց էլայ ինձ ասա. ինձ պատմիր քո սրտի ցաւը,
թէ ձեռիցս գայ՝ բաջի, Աստուծոյ սուրբ անունը գի-
տենայ, կմեռնիմ, քեզ մէկ ճար կանեմ։ Ասա՝ գլխիդ
ղուրբան, ասա, երեսս ոտիդ տակը։ Հէնց իմանում ես,
ամէն չալ բան ծձ ա, որ կծի, ամէն պսպղուն բան
թոուր ա, որ կտրի. չէ՛, ես էլ մարդ եմ, հօրնըմօր,
քիր ու ախպօր տէր. որդի, օղլուշաղ չունիմ, ամա
մարդ հէնց օղլուշաղ պտի ունենայ, որ սրտումը գութ
ըլի։ Թուր խրես սիրտս, չեմ հեռանալ, քարով ինձ
հետ ածես, չեմ ձեռք վերցնիլ, դուռդ վրէս հետ անես,
էս չօլումը կմնամ, էս օր չասես, էս գիշեր էլ կմնամ,
մինչև քո ցաւը չիմանամ, չեմ հեռանալ, չեմ գնալ։ Թէ
եթիմ ես, արի, քեզ պահեմ, թէ հիւանդ ես, թող
գամ, քեզ ծառայեմ, թէ չէ էդ ջահէլ, ջիւան հա-

սակիդ, էսպէս օրը ճաշին, էս շոքին, որ ջանաւարդ
ընիցը չի դուս գալիս, դուշը տեղիցը չի եռում, դա
նստել, սուբ ես անում, այ իմ սրտի քանդող՝ ինչպէ
էդպէս ձէնը լսեմ, ու հանգստանամ։ Թէ քո հաւատ
չունիմ, քո պատկերն ունիմ, թէ Թուրք չեմ, Հայ
Քրիստոնեայ, մկամ Թուրքին Աստուած կայ, Հայի
չկայ։ Թէ տղամարդ եմ, էնդուց ես քաշվում՝ բայլ
աչքի լիս, չար տղամարդը, վատ հոգին ցերեկը, լու
սով, էսպէս չի գալ մարդու դուռը, էսպէս չի աղաչի
Դարդդ ասա. Թէ էլ ինձ տեսնես քո օրումը, թոլ
ա, ինձ սպանիր, ինձ կրակը դիր, էրիր. Թէ ձէն տա
ոչ մէկ էլ էս օրին հասնիմ, քո ցաւը տանիմ, չե
գնալ, չեմ գնալ, ոտդ կհամբուրեմ, գլխովդ պտիտ կը
գամ. ասա, որ իմանաս՝ թէ մէնակ քո ազգի սրտում
չի Աստուած ռահմ, ջիգեար ստեղծել, Հայ Քրիստո
նէն էլ սիրտ ունի, Հայ Քրիստոնէն էլ ցաւ կիմանայ
Ասա, գլխիդ մեռնիմ։ Էս թաղածների սաղդին ասա
ինձ մի մաշիր, մի սպանիր։

Ինձ էնպէս էր երևում, որ երկար վախտ մոր
հետ կռվում ու չէր իմանում՝ թէ օտար մարդը, Քրիս
տոնէն ինչպէս Թուրքին քսակ կանի, որ էնպէս մի
մեանց հակառակ են, միմեանց հաւատի թշնամի։ Բայ
հետն էլ տեսնում էր բալքի, որ բերանս չէր մէնա
խօսում, սիրտս էլ, աչքս էլ։ Ինձ համար չեմ ասում
օձն էլ իր թոյնը կթափի, երբ լեղուն ուզիդն ասի
ուր ճեաց ադամորդին, էն հալին, էն դառը հա
դաղին, որ երկուսիս սիրան էլ՝ կրակի պէս էրվում
էր։ Սուտ են ասել՝ թէ Ասիացի կինը մարդ տեսնի
լիս՝ ուզում ա, նրան կտրատի, աչքն ու հոգին լա
իմանում են, թէ ինչ պտուղ ա կամենում իրանց հա

լալ սիրտը հարամացնի, իրանց անմեղ հոգին դառնա
նի։ Ասիացի կինը հրեշտակ ա, սուրբ հոգով մատացիր,
սրբի պէս կտեսնես նրան, օձի պէս սողայ, նրա աչքը
բոց ա, շունչը կրակ, ձեռը թուր, նա քեզ կէրի, նա
քեզ կկտրատի, նա քեզ կխորովի. ես էսպէս եմ տե
սել, էսպէս տեսայ էսօր էլ, նհաթ տեղ չեմ իմ երկ
բացի աղչիկ, կինարմատի գովում։ Վատ հոգին ամէն
տեղ կայ. չօռոտ պտուղը ամէն ծառի վրայ։

«Ձեր խաչին դուրբան՝ այ Հայ Քրիստոնեայ. ձեր
ժամի հողին երեսս մատաղ՝ այ անծանօթ դարիբ»՝ դէջ
դանգէջ սկսեց իմ ցաւալից աղչիկը, իմ սիրուն Թուր
քի աղչիկը, գլխին տալ, գոռալ, ծնկին վեր հատել,
ասել. «Ա՜խ՝ էն ինչ բերան էր, որ ձեզ օրհնեց, որ
էդպէս ազգ ունենաք, էդպէս հաւատ, էդպէս եկեղեցի,
էդպէս սուրբ օրէնք։ Հէնց մեզ էր Աստուած իր աչ
քիցը քցել, իր սրտիցը հանել, մեզ անիծել, որ էնպէս
օրէնք ունենանք, էնպէս հաւատի ծառայենք, որ ոչ
ծնող ա հարցնում, ոչ որդի, ոչ սէր, ոչ կարգ, ոչ ա
ղօթք, ոչ պսակ։ Անամ ջան, Անամ (մէր) երբ որ որ
դիդ կրակումն էրվում ա, փոթթվում, երբ որ դը
ժոխքն ամէն սհաթ չանգերը քցած, ինձ ուզում ա
տանի, ուտի, փչացնի, դու էլ իմանում ես, քո սուրբ,
քո ազիզ երեսին դուրբան։ Տունդ աչքիս առաջին,
տեղդ տասը գազ հեռու, բայց ա՜խ՝ վա՜յ... գազան հէր
ա Աստուած ինձ ռաստ բերել, որ ոչ սիրտ ունի, ոչ
գութ։ Հայվանն իր ճուտին սիրում, պահում ա, նրա
ցաւը քաշում, նա ինձ էստեղ ա բանը, կրակը քցել
էրում, տանջում, քեզ էդտեղ՝ տանից, տեղից հեռաց
ած, դուս արած՝ իմ կարօտովս քեզ մաշում, խո
բովում, քո ազիզ սիրոքն իմ սիրտս անշէջ բոցի մէջը

քցել՝ սպանում։ Քո տան դռնից դու ես ինձ մոխ-
տալիս, քեզ ու քեզ կորստում, էս խարաբիցը ես ես
քո շվաքին նայում, նուաղում, օրը հազար անգամ դը-
ժոխք ու անդունդ մտնում, մաշվում, էլ եդ դուս գա-
լիս, մղկտում, զղջում։ Դուռդ գամ, դու չես ինձ մոտ
թողալ, հարևաններդ կտեսնեն, դու դաս ինձ մոտ
սար ու ձոր բերան կառնեն եդ կասեն ու մեր ան-
գութ հերը, մեր անօրէն դահիճը թէ իմանայ, քո ա-
րինը ինձ կնեռկի, իմ մարմինը քեզ կդառնայ գերեզ-
ման։ Ընչի՞, ընչի՞ ինձ աշխար բերիր, ինձ կեանք տը-
վիր, որ իմ կեանքն էլ էսպէս խաւարի, քո արևն էլ
Ո՛չ երկինքն ա մեր ձէնը լսում, ո՛չ երկիրը մեր ա-
ռաջին ճաքում, ո՛չ հրեշտակ մեր հոգին առնում, ո՛
սատանայ մեր տուն ու տեղը կրակ տալիս։ Ո՞ւր գը-
նամ, որ քեզ մոռանամ, ո՞ւր ըլիս, որ ինձ չերևիս, ո՞ի
աշխարքում, ո՞ր պուճախում։ Թև չունինք, թռչինք
սար ու ձոր ընկնինք, թուր չունինք, որ մեր սիրտ
մենք ճոթռենք, վեր ածենք, վեր ածենք, որ մեր ա-
րինակէր հոր աչքը մէկ օր կշտանայ, մէկ օր չար սիր-
տը հովանայ, մեր սև օրը վերջանայ, նրա սև հոգին
դինջանայ։ Դանակը կոխեմ ջիգարս՝ անա ջան, բա-
մէկ ախ էլայ չքաշես, մէկ ձէն էլայ չտաս, ո՞նց մը-
նիմ հողը, ո՞նց թաղեմ իմ գլուխը։ Հէր, հէր՝ որ չա-
սհաթին արևի լիսն աչքիդ ընկաւ, շունչդ էս աշխար-
քի օդի հոտն առաւ, որ էդպէս ջիգարդ քարացաւ
սատանէն էկաւ, սրտումդ բուն դրեց, քո սիրտը դը-
ժոխք դառաւ, քո միտքը անշէջ կրակ, որ ո՛չ մոր սուլ-
ա իմանում, ցաւում, ո՛չ որդու կսկիծ, արտասուն
տեսնում, սիրտը մրմնջում։

«Ինքը դուռն երեսիս հետ արած թողել գնացել

ա, հաց ու կերակուր ինձ համար լեղի, էն էլ ա ձե-
ռիցս խլել։ Առաւօտը մթնէ մութը գնում բազարը, բի-
գունը մթնէ մութը՝ մըրրած փրփրած գալիս, ու ածդը-
հայ օձի պէս պատից, դռնից հոտ քաշում, որ տեսնի՝
թէ հօ մարդ չէկել էստեղ։ Հայ Քրիստոնեայ, քո հա-
ւատին, քո անուշին դուրբան, քո խաչը, քո սուրբ
հաւատն ա քեզ պահել, մէկի հալբաթ մէկ սառը ջուր
ես տվել, որ նրա խէրը առաջդ ա էկէլ, թէ չէ քունն
էր թուրը, քո կեանքն էր թվանքը։ Գնա, հեռացիր՝
թէ քո արևը քո Աստուածը, քո սուրբ հաւատը, իմ
երված օրն ու ուժերը կսիրես, իմ մէկ սհաթ ումբրը
քո աչքին քաղցր ա։ Գնա, հեռացիր. թող՝ էս հողը,
էս խարաբէն, էս գեօրխանէն ըլին իմ գերեզմանը, իմ
պահարանը, իմ դժոխքը, իմ տանջանքը։ Հալբաթ մէկ
օր էլայ մէկն ու մէկը կքանդվի, ինձ տակով կանի։
Հէրս չարասիրտ ա, անգութ անողորմ վրէս չի լայ։
Մէրս հեռու, տանից դուս արած, օլքից, ալամից, դо-
վում զարդաշից դէն քցած՝ որ վրէս սուք անի։ Իմ
սուքը՝ ես պէտք է անեմ, իմ հողը՝ ես պէտք է տամ
գլխիս, իմ մարմինը՝ ես պէտք է թաղեմ, կորչիմ, ֆո-
րեմ, պրծնիմ։ Ինձ ո՞վ արեց չարայ, որ դու անես,
դու ա՛յ աստուածասէր Հայ, քո դնին, ժասարին դուր-
բան, Քրիստոնեայ Հայ»։

«Մօլլայ, ախունդ ինձ չօգնեցին, Մուշտէիդ դուռ-
բան, իմամ, իսլամ ինձ ճար չարին, էլ ալամ մէջ ըն-
կան, իմ հէրս չլսեց, ժորիցս ինձ զրկեց։ Հէրնըմէրս
զլխիս, ես եթիմ, անտէր, անճար, անքօմակ, սոված,
ծարաւ, որ օրէնքն ու հաւատը մարդի սիրտը չկապեն,
որ Աստուած, ու մէջիդ նրան չար ճամփից եդ չբերեն
որ Աստծու տված սէրը, Աստծու դրած սիրտը մարդ

ու կնիկ չկապեն, հէր ու որդի իրարից հանեն, մէրը որդու համար տանջվի, մէկ հուբա չունենան, չթողան, հէրն իր ձեռովը իր տունը քանդի, իր դուռը շարի, քեաբով, դուրանով առած կողակիցը էլ եդ բաց թողայ, էլ եդ անհաց, անջուր, չիփ, չիփլաղ տանից տեղից դուս անի, օրվան հացին կաբաս՝ սար ու ձոր քցի, ու նրանից բերած, նրա կաթնով մեծացրած որդին, նրա դառը քրանքով պահած ապրացրած, ջրից կրակից դոշին, գրկին թափած, պրծացրած զաւակը գլխին տայ, ձեռիցը խլի, ու երեսն երեսի հետ էլայ լեզուն լեզվի հետ էլայ՝ տեսնել, խօսալ չթողայ, վա՜ էսպես աշխարքը քանդվի, էսպես կաթը հարամ ըլի էսպես կեանքն ու օրը փուչ ըլի, էսպես օրէնքն մարդի ու Աստուծոյ առաջին պարտական, էսպես հողն անիծած՝ սատանայի փայ, էլ ինչ կարող ես դու լինել, այ քո էկած ճամփին, քո ստեղծող Աստուծուն քեզ պահող, մեծացնող օրէնքին հաւատին դուրբան Սիրտդ ցաւում ա, գիտեմ, չունքի քեզ էլ ա մէր բերել, քեզ էլ ա հէր որդի ձէն տվել, քեզ էլ քիր ու ախպէր սիրել, գրկել, գլխի վրայ, դոշին՝ գրկել կպցրել Հաց չի ինձ հարկաւոր, որ ուզեմ, տաս, ջրի չեմ հարբաթ, փողի չի սիրտս փափագում, զառ դումաշ ունենամ էս սնաթին կէրեմ, կկտրատեմ, գանձ ոսկի ունենամ ջուրը կածեմ, հարամուն կտամ, թախտ, ամարաթներ նստացնեն՝ կրակ կտամ, ինձ էլ հեռը կէրեմ. իմ ժողովեմ կարաս, իմ ծնողին հասրաթ, աչքս նրա ճամփին սիրտս նրան թամարզու, տունն ոտիս տակին, ձէն անկաջումս, աչքս ու վախը՝ հէնց բանիր լսում եմ, գրեկը չեմ կարում ոտի, շղի ձէնիցը իմանալ գիշերն ելիմանակի տակին՝ անկաջ դնում, լսում, ինձ էստեղ

ոպանում, նրան էնտեղ մորթում, հոգին առնում։ Ա՜խ՝ որ դառը, անրան դառը իր մոր եղևիցը միայ, բղդայ, օձի ճուտը իր մոր քամակիցը սողայ, հաւի ձագը մոր ձէնը լսելիս ծվծվայ, լվլվայ, գլուխը թևի տակը դնի, եա կատուցը կացին, մէրը կրխայ, ձագը ճխայ, մէրըքուչուջ, ձագը մունջ մունջ, հեռը խաղայ, հեռը ճվայ, բաս ինձ մէր չի բերել, բաս ես կաթով չեմ մեծացել, բաս ինձ չեն գրկել, սիրել, որ սիրտս չտրաքի, լերդաչաքի, աչքս չմաշվի, շունչս չքաշվի. լերդս չնուաղի, թոքս չդաղվի. այ էդ լիս երեսիդ, քո լիս հաւատինդուրբան»...

«Քո լիս հաւատին, քո արդար կրօնին, որ ընչանք հօրնըմօր սիրտը չի կապում, թագը չի դնում, ընչանք սէրը չի փորձում, կարմիրը չի կապում, ընչանք սուրբ տաճարը չի թողում, մինչև նրանց բընութիւնն ա քննում, խմանում, ընչանք հէրնըմէրը չեն զաւակաց թագն ու պսակն օրհնում, քահանէն չի ձեռը դնում, ընչանք աչը չեն հարսի ու փէսի իրար մէջ դնում, խաչը չեն գլխներին դնում, ընչանք մահը չի գալիս, հոգին չի բաժանվում, մարմինը դինջանում, հողն ու գերեզմանը իրանց տվածը, Աստուած ու հրեշտակ իրանց պահ դրած ամանաթը տանում, ոչ հասրաթը պակսում, ոչ մուրազը, ոչ սէրը, ոչ տէրը, ոչ հէրը, ոչ մէրը։ Ո՜չ կրակը, ոչ ջուրը, ոչ բոցը, ոչ ցողը, ոչ դաշտը, ոչ պտուղը, ոչ սարը, ոչ ծաղիկը, ոչ ամպը, ոչ անձրևը։ Ա՜խ՝ օրհնվի, օրհնվի էն բերանը, որ ձեզ օրհնեց, էն սուրբ միտքը՝ որ ձեր օրէնքը մտածեց, ձեզ կրօն տվեց։ Ա՜խ՝ աշխարքումն որ էս բախտունիք, երկնքումը ինչ տեղ կունենաք, մարդի միջին, մարդի սրտով որ էնպէս էք իրար սիրում, իրար ընդունում, հրեշտակաց միջին, հրեշտակի սրտով, հրեշ-

տակի սիրով՝ ինչքան մեծ չպտի ըլիլ ձեր փառքը, ձեր կեանքը, ձեր մխիթարութիւնը, ձեր ուրախութիւնը, ձեր սուրբ կրօնին ու հաւատին ես եսիր դառնամ։

«Որ գնամ մուշտէիդի ոտներն ընկնիմ, որ գնամ գլուխս ծեծելով հօրդ ճտովն ընկնիմ, չօքիմ, ոտը համբուրեմ, կանգնիմ, երեսը, աչ իմ հրեշտակ, իմ արդար հոգի, իմ ճչք, իմ լիս, որ հոգիս կրակ քցեցիր, լերդս դուս ճոթռեցիր, բաս ինձ չէն լսիլ, որ էս Հայ, Քրիստոնայ տեղովս էսքան ցաւում եմ, մղկըտում, իրանք իրանց արնին ոտի տակ են տալիս, կրակը քցում իրանց միսը՝ սաղ սաղ խորովում, բաս ինձ չէն լսիլ, չէն հետս մրմնջալ, չէն հետս մղկտալ, գալ, բարշիլ, քո աչքը սրբիլ, քո սիրտն առնիլ՝ էդ արդար սրտիդ ստեղծողին զուրբան», էրված, լցված սիրտս ու բերանս գէջդանգէջ բաց արի ու մնացի՝ էն արևի էրած, էն արտասանքով մաշված, չուռուսիշ էլած երեսին, էն թուխ թուխ աչքերին, էն զալամով քաշած ունքերին, էն խոռրփոթ ընկած ճակատին, էն ոսկեթել մազերին, էն լուսաթաթախ պատկերին, էն երկնանման տեսուն, էն կախ ընկած գլխին, էն ծեծված, ջարդված, արինակոլոլ, արտասուաթաթախ դէշին ու բզին՝ հոգիս երկնքումն, աչքս վրէն սառած, մեռած, կանգնած, չորացած, փէտացած, ու քար ու հող փուշ դառան, աչքումս ցցվեցին, սուր դառան, ինձ կտրատեցին, դժոխք դառան, ինձ ուզում էին ուտիլ։ Որ ձեր հաւատիցը չըլի մարդ, պէտք է չսիրեմ, հետը ցաւինք...

«Չէ, չէ, վայ իմ օրիս, արևիս, գնա, հեռացիր, վայ, վայ. Աստուած դու ինձ ազատի. Ալլահ, դու ինձ

պրծացրու, քո ձեռն ինձ պահի. էն ով ա գալիս. վայ, վայ... թէ հէրս ըլի... ինչ կանեմ. ինչ, ինչ... գնա գնա... քո գլուխդ էլայ պրծացրու... վայ քո օրին, քո ջիւան արևին, մահդ առաջիդ ա—էլի կանգնել ես... գնա, գնա... Ասեց, ու ախ... էն օրը գնայ, ոչ եդ գայ... ինչ որ ես տեսայ... դուռը վրէս հետ արեց. Ասիացու սիրտն ինձ յայտնի էր, չունքի ես էլ եմ Ասիացի. վրէս թուր չկար. ը՛լէր էլ, եա ես պտի մեռնէի. եա իմ դիմացի մարդը։ Ո՞վ մէկ բարաքեալլայ կասէր, ով իմ մուրազս տեղ հասցնէր. մեռնելու հետ վաղուց էի բարեկամացել, հաշտվել։ Իմ սրտիս էրողն էլ նեքսեի-ցը՝ Աստուած, երկինք, սուրբ, մարգարէ, հաւատ, օրէնք մէջ բերում, որ գլուխս առնիմ, կորչիմ։ Էկողը մօտանում էր, սիրտս մղկտում, իմ լերդս տրորողն՝ առաջիս տրորվում, գետինը ոտիս տակին դողում, աբին էի տվել, նրան հօ չէի պրծացնիլ, ազատիլ։ Էլի մուշտէիդի, ախունդի, էլի հօր, բարեկամի ոտներ գնամ ընկնիմ, բալքի մէկ ճար անեմ, էսպէս մնալով, գլուխս մահու տալով ինչ կշինեմ, միտք արի, գլուխս թափ տվի, աչքիս տեղն էկաւ, խելքս իմ գլուխս։ Մէկ ախ քաշեցի, դօշիս խփեցի ու արինն աչքս առած, մուխը քիթ ու բերանս լիքը, ձորն ընկայ, սարնրդուսնի էլայ։—Բայց ախ էն գնալն էր, որ գնացի։ Էլ ոչ ախունդ կարաց կորածս գտնիլ, ոչ մուշտէիդ, ոչ Թուրք, ոչ Հայ։ Երկինքն ես գնացել, հոգիդ լիս կտրի, այ տարաբախտ հոգի. ժորդ ծոցը մտար, հանգստացիր, դինջացիր։ Սուր քո սիրտը մտաւ, էն ձեռը չորանայ, դու հօ քո մուրազն առար։ Թէ սաղ ես դեռ հլայ, ու սարէսար քցած, որ տեղդ չիմանամ, ախ ինչ կըլէր, մէկ անունդ էլայ լսել էի, մէկ ազգդ իմացել, որ քո

ցաւն յիշելիս, անունդ էլ տայի, որ հովանայի։ Ես քո պատկերը, էն աննման պատկերը, ես քո էն ցողանման արտասունքը, էն երկնքին՝ սաղիքեան տված, ընծայած հոգիդ՝ չեմ մոռանալ, չեմ ուրանալ։ Թող՝ իմ հաւատն ինձ պատժի, թող՝ իմ օրէնքն ինձ հալածի, տանջի, քո ազգի գեօրխանէն՝ քանի շունչս վրէս ա, լեզուս բերնումս, հլայ շատ կգամ ուխտ, հլայ շատ անգամ կգամ էն արդար հողը տեսնելի, էն քանդված խարբէն մտնելի, որտեղ քու ծունկն էր չոքել, քո արտասունքը թափում, քո շունչը դուս գալիս, քո աչքը լալիս։ Էստեղ չտեսանք էլ իրար, երկնքումը հո՝ Աստուած մեզ վրայ չի բարկանալ, էն բարեգութ Աստուածը, որ իր աչքի առաջին իր որդիքը իրար տեսնին, իրար փաթաթվին—հոգին անմեղ ա, երկինքը սուրբ—աղջիկ ու տղայ, Թուրք ու Հայ, ով էն միտքը կունենայ—որ սրբութիւն չըլի սրտի, որ սրբութիւն չըլի կամքը։ Մեր չար կամքը հողին ա, հողն ա մեզ խաբում, էս չար հողը, էս չար աշխարքը, մեր հրեշտականման Աստուծոյ պատկեր հոգին Աստծունը։ Էնտեղ էլ հաւատ, օրէնք չեն հարցնիլ, գործք կհարցնեն. արքայութիւնումը տեղ շատ, Աստուծոյ թագաւորութիւնումը այվան օթախ շատ։ Հալբաթ մէկ պուճախ էլ մեզ կընկնի. մէկ քիօլգայ էլ մեզ շվաք կանի, մէկ ծաղիկ էլ մեզ իր հոտը կտայ, թէ չէ դժոխքը հո կայ ու կայ։ Դրախտը ամէն մարդ ա ուզում, ու չի դրախտի ճամփի հետ գնում։ Թող Աստուած քո խաթեր ինձ դժոխքը տանի, թէ էնպէս իմ մեղացս բարկանայ։ Գեհենամն քեզ մոտ չըլիլ, դժոխքումն էլ հո չեն հարցնիլ, չեն ջոկիլ։ Ամէն չար, ինչ ազգ էլ որ ըլի, էնտեղ պտի գայ. ես էլ թող՝ էնտեղ գնամ, թաք ըլի

քեզ տեսնիմ, քեզ գտնիմ՝ որ սիրտս հետդ տարար՝ ամբիմ տարաբախտ անմեղ, անտէր, անօգնական, իմ սիրեկան, իմ սրտի էրող, իմ լերդս չորացնող աղջիկ հնգիկ, հոգի բարի։

Կրօ՛ն, կրօ՛ն, որ ռամիկը՝ անունդ չիմանալով, քեզ հաւաս ու orենif ա ձէն տալիս, քեզ դին ու մաւսաբ կանչում, դեռ ուր էր մարդը, որ քո լիսը աբեգակի հետ էր խառնվել, քո շոխքը աստղերի հետ. քո զօրութիւնը երկինքն էր շարժում, պահում, քո սէրը երկրին խոտ ու ծաղիկ, ծառ ու պտուղ, քար ու հող, օդ ու ջուր տալիս, կենդանացնում, որ տարաբախտ, հողածինը՝ երբ իր կարօտ աչքը էս խոր ձորումը բանար, իր ստեղծող Արարչի հրաշքը տեսնէր, զարմանար, նրան չտեսնէր, թուլանար։ Երբ տկար աղամասորդին՝ չորս կողմը օձ ու կարիճ, թոյն ու լեղի, հուր ու սուր, գլխավերևն սատ, ու կայծակ, ասող ու լուսին աչքովը ընկնէր, վերանար, ձեռովը ընկնէր, հիանար, էա սարսափէր ու դողար, երբ խոտ ու ծաղիկ, թուփ ու տերև, հոտ ու համ նրա աչքն առնէր, բերանն զմայլեր, քիթն առնէր, հոգին մխիթարվէր, նրանց տվողին, նրանց ստեղծողին՝ ուզէր, չճանաչէր, խնդրէր, չգտնէր, ու աչքը ծով դառած, երեսը հողի երեսին դրած՝ չոքէր, աղաչէր, լար ու պաղատէր, ողբար, գովարանէր, սքար, օրհնարանէր։ Դու՛, դու՛ ծնունդ աստուածային, հրեշտակ անմարմին, հուր երկնային, դու՛ էիր՝ որ նրա սիրտը զարթեցնում էիր, նրա խոր գլուխը բարձրացնում, նրա թուլ ձեռքը զօրացնում, նրա սասանահար, վշտահար հոգին մխիթարում, պնդացնում, ու բերնիցը շունչը, հոգուցը օրհնութիւն ու գոհութիւն՝ արեգական լուսի

հետ, ծաղկընների հոտի հետ, թռչնոց երգի, եղանակի հետ՝ տանում Արարչի մօտ, որ նրա քաղցր աչքը, նը-
բա հայրագորով խնամքը՝ ոչ մեր երկրիցը պակսի, ոչ մեր գլխիցը, ոչ մեր հանդիցը, ոչ մեր տանիցը։
Ա՜խ, երկինքն էր մեր տաճարը, երկիրը մեր ժամա-
տունը, արեգակն ու լուսին՝ մեր ջահ ու լապտեր, աստղերը՝ մեր կանթեղ ու մոմ, երկրի հոտը, մեր բեր-
նի շունչը՝ մեր խունկն ու կնդրուկը, ա՜խ՝ էն, էն ժամանակը ի՞նչպէս էր ջերմ մարդի սիրտը, ի՞նչպէս արդար նրա միտքը, ի՞նչպէս պարզ նրա լեզուն ու խօսքը։

Քար էր պաշտում մարդը Աստուծոյ տեղ, փէտի էր երկրպագութիւն տալիս, արեգակն էր իր Արարիչը շինել, թէ լուսնեակը, որ իրան լիս էին տալիս, կրակը, թէ կայ-
ծակը, որ մէկը ոտի տակին էր էրում, մէկը գլխավերևին, քամուն էր ումուդ դրել, թէ ջրին, աստղերին, թէ ամպին, ծովին, թէ գետին, Աստուած էր կանչում՝ թէ Ալլահ, Բուդայ թէ Բրամայ, Լամայ թէ Եօհովայ, որ իր հօրը գտնի, ոտը հասբուրի, իր ստեղծողի տեղն ի-
մանայ։ Նրան փառաբանութիւնը տայ, Դու, Դու էիր նրա սրտի դրդողը, աչքը բաց անողը, միտքը յորդորո-
ղը, երեսը դարբդուս քաշողը՝ որ գայ հասրաթ, հաս-
րաթ ման գայ, որդին իր հօր սիրովն երվի, մաշվի, բայց չտեսնի, չհովանայ, ու իր տկար մտքումն չհպար-
տանայ՝ թէ ինքն էլ կարաց էնքան բարձրանալ, որ իր ստեղծող հօր տեղն իմացաւ, էնքան վերացաւ, որ երկնքի տուտն ու տակը գտաւ, բոլոր աստղ ու արեգակ քննեց, իմացաւ, էլ երկիրը իրան պէտքը չէ, երկինքը պէտք է թռչի՝ որ միշտ իր հօր հետ ըլի, իր հօր ձե-
ռի տակին, նրա աչքի առաջին, ու երկիրը մնայ ան-

զարդ, անապատ, չոլ ու դարդակ։ Անբան անասունքն էլ, անլեզու քարերն էլ՝ շունչ առան, գլուխ բարձրաց
ին որ նրանց էլ լեզու տաս, նրանց էլ հո-
գի, միտք, որ իրանց ստեղծողին փառաբանեն, բայց դու երեսդ ծածկեցիր, մարդի փայն էիր, մարդի մէջն էկար, հօրը սիրտ տվիր, մօրը ջի-
գեար, քիր ու ախպօր, որդու զաւակի, ազգական, բա-
րեկամի՝ աչքին արտասունք, բերնին բարբառ, լեզվին՝ խօսք, սրտին սեր, ա՜խ սեր, ա՜խ սեր, որ երկնքին նայեն, Ա-
բարչին սիրեն, երկրին նայեն, Ստեղծողին սիրեն, ու էս մաքուր, էս աստուածային սիրովը վառված՝ իրանց նմանին սիրեն, նրա բարին կամենան։

Բայց մարդն, ա՜խ՝ մարդն էստոնք բոլոր, քեզ, քեզ, սուրբ հոգիդ թողեց, որը կրակով էրեց իր նմա-
նին, որը թրով կոտորեց, որը ջրով խեղդեց, որը կախ տվեց, որին անիծեց, որին նզովեց, Քո, ա՜խ Քո խաթեր՝ շունչդ աստուածային. բարեկամութիւնը հե-
ռացաւ, սէրը վերջացաւ, թշնամութիւնն արմատացաւ, ատելութիւնը զօրացաւ։ Բայց ա՜խ, ա՜խ, ե՞րբ էս մեր աչքի կապը կարձակվի, ե՞րբ էս մեր, կոյր, խաւար մտքի փարդէն կպատռվի, որ էլի քեզ ճանաչենք, քեզ սիրենք, քեզ մեր մէջը բերենք, մենք քո գիրկը գանք, որ էլի իրար սիրենք, իրար ընդու-
նինք, ու ինչպէս մէկ հօր որդի, երկրումն մէկ սիրտ, մէկ հոգի, մէկ միտք, մէկ տեղ, մէկ գերեզման ունե-
նանք, ինչպէս երկնքումը, որ յետ առաջ պտի գանք, պտի գանք, բայց վա՜յ մեզ, վա՜յ, թէ պարզերես չելինք ու լանք։

ԲԱՐԵԿԱՄԻ ՄՕՏ։

Սիրտս լցվել ա ինչպէս արեան ծով
Ա՜խ որ չե՛մ քաշում, բերնիցս՝ վա՜յ տալով
Էս իմ չոր գլխին, իմ սեւ արեւին,
Զուխտ ձեռով տալիս իմ մեռած դօշին,
Աղի՛ղ բարեկաս՝ Քո անունդ յիշում
Ու քեզ չե՛մ տեսնում, մահի դուռն հասնում։
Սիրտս էլ, ջանս էլ հետն, ուզում ա դուս գայ.
Էլի ինձ պահողն՝ ա՜խ՝ Քո սուրբ սէրն ա։
Մէկ դօշդ Թո՛ղ դօշիս հասնէր ու էն սնաթն
Տանէր Արարիչն իր տված ամանաթն։
Երաբ սուրբ հոգիդ քնած ա, Թէ զարթուն
Երաբ որ էքուց տանեն ինձ Թաքուն,
Էն սա՛ռն հողին տան, իմ օրս խաւարի,
Էլ էս երկնքի տակին քեզ չհասնի
Իմ ձէնս, խաւար աչքս քեզ կարօտ մնայ,
Ա՜խ մի կգա՞ս էլայ կկանգնիս ինձ վրայ,
Էդ սուրբ բերնովդ հոգիս կբյիշե՞ս,
Թէ դու էլ սրտիցդ անունս կջնջես։

—

Աղի՛ղ բարեկամ, ա՜խ քո դուռն որ գամ,
Ես էս բոպէին կանգնիմ, քարանամ.

Երաբ որ աչքդ բանաս, ինձ տեսնիս
Էլ շունչ չունենամ, որ սիրտս առնիս,
Երա՞ք մէկ տխուր աչքով ինձ էլայ
Կնայիս, որ հոգիս էն կողմն իմանայ.
Թէ էս աշխարքումն ինձ էլ սիրող կար,
Ես էի մէնակ մեղաւորն ու չար,
Որ ո՛չ քո սէրը լաւ ճանաչեցի,
Ոչ Աստուծոյ տված կեանքն վայելեցի։
Սիրտս ինձ համար կրակ էր դառել,
Աշխարքն ինձ համար վաղուց վերջացել։
Ով իր մեռածի հոգին էր լալիս,
Ես իմ սաղ գլխին ծեծում, վայ տալիս.
Մահն էի ուզում, առայ, դինջացայ.
Քեզ էի ուզում, մէկ օր չկշտացայ։
Հոգիս տալիս էլ՝ ես ձեռս բցել
Քեզ էի կանչում, որ տեսնիմ մէկ էլ։
Բայց ա՜խ՝ իմ լերդս չորացած մնաց,
Հասրաթս քեզանից չառայ աչքս բաց։

—

Բարեկամ սիրուն, սիրուն բարեկամ,
Ինչ կըլի որ ա՜խ՝ ես մէկ դուշ դառնամ.
Կանգնիմ երեսիդ՝ դու շունչ քաշելիս
Բանամ իմ սիրտս՝ որ մէկ ծէնս առնիս.
Կաթի երկնային աչքիդ լիսն ինձ վրայ
Երված սրտիս ծուխն, բերնիդ հովին տայ։
Պարզի էս խաւար միտքս, որ ինձ մէկ օր
Ո՛չ մահ է տալիս, ոչ կեանքս առնում, որ
Կորչիմ, ա՜խ արծնիմ էս դառն աշխարքիցս
Կտրվի էս չար շվաքն եղեւիցս.

Հոգիս քեզ պահ տամ, ու մարմինս հողին,
Որ դու բերես հետդ վերջին սհաթին,
Ու էն դինումն էլ թէ դժոխքն ինձ տանի.
Քո սուրբ աղօթքը ինձ մէկ ճար անի.
Թէ ես անարժանս էն՝ սուրբ Արարչի
Պատկերն իմ ձեռովն, ա՜խ՝ խանգարեցի,
Քո արդար ձեռը, քո սուրբ բերանը
Բալքի ինձ չարայ անի էն ատեանը։
Դու ըլիս էլի իմ հոգու փրկիչն
Ինչպէս էս սհաթին Դու ես իմ մաշիչն։

Թող օտար կարդացողը, որ՝ ոչ իմ սիրտն ունենայ, չկարծի, թէ էս էլ մէկ մտքի խաղ էր, որ բերնիցս դուս թողի։ Ո՞վ ա ում պարտական, որ իր դարդը թողած՝ ուրբշինը միտք անի ու ցաւի։ Ցիմար կըլիմ, որ էս պահանջեմ. սիրտս բերնիս դէմ ա առել, քունն էլայ աչքս չի գալիս, որ բալքի էս խաւար միտքս թմբրի, դինջանամ։ Սաղ օրը այսահարի պէս մահ եմ էկել, սար ու ձոր չափել։ Ո՛չ գարունքվան կանաչ դաշտերը սիրտս բաց արին, ոչ արեգակի էն երկնային, պայծառ, կենդանատու արևը։ Բաղիցը փախայ բաղնիսը։ Ո՞վ չի գիտի, որ նրա էն բուղը կոխած՝ մուրթը, թաց, նեղ, ցած օթախները, նրա էն ժահահոտ, տաք ջուրը, նրա կիսավառ ճրագներն ու տըկլոր լողացողները, որ էնպէս խորդ-խորդ իրար մտիկ են տալիս, մինը պարկած, միւսը պպզած, մինը նամազ անում, միւսը չիրուխ քաշում, որը սապնի փըրփրում, որը մազը բրքրում. մինը մէկ անլոյս ճրագի մօտ երեսը վեր անում, էս հինայ դնում, միւսը քիսաչու տակ տակին ձգված՝ բամբակի կծկի պէս դէս ու դէն

պտտվում, ու ծարաւածի համար էլ՝ որ ջուր չեն տ
զում, եա դուս գնացողի համար փութայ ձէն տալ
իսկ դժոխքի պատկերն ա մարդի առաջին կենդան
նում. պատերը զարդանդելիս, գեղինը դրմբալիս։ Ի
կուզէ՝ ասեն, չէ թէ նաչալի, ցաւագարի, սաղի ու
լաս մարդի երեսն էլ, ծիծաղն էլ, ձէնն էլ, էս խ
ւար տեղը, էն դալուկ ճրագի լսի մօտ, այլանդակվ
փոխվում, մէկ ուրիշ թահրն ա երևում։ Ինձ էսպէս
թվում, իլլահիմ իրիգվան մթնագիշերը, ուրբշինը չ
գիտում։

Բայց Աստուած իմ դուշմանիս չի՛ ռաստ բեր
կրակն ու բոցը՝ որ սրտումդ ունենաս, բաղնսի ջու
տաք ա ու տաք։ Նրա ներսը մութը, քունը խաւ
Նա բղով լիքը, դու ծխով, նրա հովը պակաս, քո սի
տը կպրէ կարաս, ինչը քեզ կհովացնի, ինչը քեզ կ
թեացնի։ Բազի անգամ՝ որ էլի էսպէս դառը սրտ
բաղնիան եմ գնացել, չունքի շատ անգամ հէնց սրա հ
մար եմ գնում, ու Աստուած ինձ խեղճ ա էկել,
աշակերտաց մէկն ու մէկը ինձ պատահել ա, հետը խ
սացել, հանաք եմ արել, սիրաս բաց ա էլել, չուն
նրանք են իմ պահողը, (ապրուստի մասին չեմ ասո
սրտի մասին, չունքի նրանց անմեղ երեսը որ տ
նում եմ, միշտ մտքումս էն եմ ասում, թէ սրանց
լաւ կրթութիւն տաս, համ աշխարքի պէտքը կգ
համ քո ամակը կիմանան ու էս ա ինձ պահում,
չէ վաղուց պատանս փթած, հոգ դառած կըլէր)։

Էս անգամ էս մխիթարութիւնն էլ չունեց
Աչքս դռանը մնաց։ Սնաթի չորսին գնացի, օխտ
անց էր կացել։ Գիտէի՝ որ էս օր Մողնօբայ ու Քաա
բայ էր, ամա խալխի հետ ինչ գաւայ ունէի։ Ի

Բայեազդցի Հայ էր իմ քիսաչին, իմ զրիցաբնկերը, իմ
ցաւակիցը։ Արասին վաղուց էի խոստացել, ինչ չէր ա-
նել։ «Իմալ էնեմ՝ աղա Ջան» շատ խօսքի մէկն էլ էս էր,
«Տուն, տեղ քանդեցինք, թորգեցինք։ Մեր շհարում
մարդ մի էլ ես էի։ Մկայ ցամաք խացն էլ ա մեր գըլ-
խիցը դհաթ էլել։ Զիմ ճժեր դուռն երեսին թողեր, ցը-
քել, էկել եմ էսվանք, որ մէկ քանի մը շահի դատեմ,
գնամ նրանց խաւարին խանիմ։ Մենք սանիթքեաբ
մարդ ենք, ռաչպարութիւն չենք կարայ էնել, դոբը
կորչինք»։—Թող լսողը միտք անի, թէ էս լսելիս՝ սրտիս
ինչ տեղն էր եի գալիս, էրվում։ Շատը մեղալ էլ ու-
նի, ու էնպէս մէկ գոռոզ սրտով ցոյց ա տալիս, որ
հէնց իմանաս՝ թէ էս օր ա Օսմանցվին, Վանայ փաշին
յաղթել, էն սհաթին ա թուրը սրբում ու իր տղամար-
դութեան վրայ խնդում։ Բարսեղ, Մկրտիչ Աղի ա-
նունը որ տալիս ես, ուզում են՝ երեսներին խաչ հա-
նեն։ Էսպէս էլ երախտագէտ սիրտ կըլի, որ սրանք
ունին։ Ո՞վ ա ասում, թէ Հայը լաւութիւն, իշխանի
պատիւ չգիտի։ Լաւութիւն արա, թէկուզ ջուրն ա-
ծա. ձկները հօ կվայելեն։ Հէնց ուզում ես, որ առա-
ջիդ չօքին, դեռ քեզանից մէկ չօռ չիմացած, քեզ եր-
կրպագութիւն տան, էդ ինչպէս կըլի։—

Վերջը մէկ մարդ էլ էկաւ, երկու պտիկ երեխա
խոտած։ Վրիցն երևում էր, որ աղքատ պտի ըլի, բայ
ինչպէս էր էն հրեշտակ զաւակներին դօշին կպցնում
լեղացնում, խաղացնում։ Կարծեմ՝ թէ էն բոպէին՝ ո
ասէիր՝ աշխարքի բոլոր գանձը քեզ կտամ, դրանց մէ
կը ինձ բաշխիր, չէր անիլ։ Մէկին փոքր ժամանա
առայ գոգս, աչքը հետը գնում էր։ Բալքի թէ էս է
պատճառը, որ կշտիցս հեռացաւ, միւս հաւուղը գնա

Սրտումս նեղացայ, ամա մեղաւորը ես էի, օտարի
բեխին ընչի՞ համար պտի մարդ ձեռք տայ։ Բայց ի՞
անեմ, մէկ երեխայ տեսնելիս, սիրտս հեռը գնում
Ութ տարեկան վախտս էլ էս պակասութիւնն ունէ
Հէնց ձեռս փող կընկնէր թէ չէ, իսկոյն կվազէի բ
զարը, միրգ կառնէի, ու իմ թայդաշ երեխէքանցը կ
տացնէի։ Շատ էլ ծեծ եմ կերել էս մասին. ամա խեղ
գլուխս չի էկել։

Բաղնոցիցը որ դուս էկայ, մութը գետինն տ
էր։ Ո՞ւր գնամ, չէի գիտում։ Առանց բարեկամիս տես
նելու՝ ի՞նչպէս էի քուն մտել։ Բայց էս առաւօտն
տեսել, հեռը խօսացել, կարօտս առել, մէկ էլ գնայ
վախում էի, թէ նեղութիւն տամ։ Մէկ էլ միտք էի
նում, թէ նրա ծնողքը ի՞նչ կասեն, որ չէի ճանաչ
Ո՛չ հասակն էր հասակիս բարերար, ո՛չ ասուիճանը,
վիճակը։ Նա տասն ութ տարեկան, ես երեսուն երկ
նա աշակերտ, ես վարժապետ, նա ջահել, ես ահել։ Բայ
ի՞նչն էր ինձ էսպէս վառել նրա վրայ։ Էն անմեղ սի
տը, էն բարի անունը, էն առաքինի վարքը, էն փ
փուկ հոգին, որ ամէն մէկ լաւ բան լսելիս կամ իմ
նալիս, երեսը կրակի պէս վառվում էր, էնպէս էր նր
ազնիւ սիրտը տաքանում։ Դ. Մ.-ների պէս ազնիւ երի
տասարդին, ուսումնասէր, բարեմասնագ Հայազգուն ի՞
Հայ չի՞ սիրիլ։ Էն առաւօտն էլ որ նրան տեսայ, էլ
մէկ ընտիր գիրք ձեռին, կիրակի օրը, էն պայծառ
բեզակը բաց էր թողել, մութը տեղը էն գրքին նայ
դառել։ Ի՞նչպէս էր լաւ-լաւ տեղերն ինձ շհանց տ
լիս, հէնց գիտես ինքն ըլի շարադրել։ «Երբ դու
ժամանակաւ էդպէս կշարադրե՞ս, մեր ազգի անուն
նպայծառացնե՞ս», ժաքուս ասում էի։

Կէս սնաթաչափ դռանը մնացել էի կանգնած։
Մէկ քանի անգամ կամաց դուռը ծեծեցի։ Ղայիմ չէի
ուզում ծեծեմ, վախում էի՝ թէ նեղանան տանը գիր,
վախտն անց էր կացել։ Սնաթի ութն էր։ Սիրտս ու-
զում էր նրան տեսնի, բայց ամաչում էի, որ ուզածս
անեմ։ Շատ անգամ ուզում էի, էնպէս վախտ նրան
վրայ հասնիմ, որ քնած ըլի. կանգնիմ, երեսին նայիմ,
տեսնիմ, թէ քնած ժամանակն էլ նրա անմեղ երեսը
էնպէս քաղցր ա, թէ չէ։ Էսպէս էլի մտքիս հետ ըն-
կայ ու ամ քաշելով եդ դառայ. ու սրտիս կրակը ու-
զեցայ՝ որ էս սև թանաքովը մի քիչ հանդարտացնեմ,
որ տեսնում ես՝ սիրելի կարդացող։ Բայց դարդս ի՞նչ
ա։ Ո՞ւր ասեմ, որ ձէնս տեղ չի հասնի։ Մարդ աշ-
խարք էնպէս գայ, էնպէս գնայ, որ մէկ բան չանի,
նրա վարդն էլ ուրրշի աչքին փուշ թվայ, իր արինա-
կիցը նեղ օրումը տեսնի, մէկ քսմակ չանի, ի՞նչ մարդ,
ի՞նչ կեանք։ Սաքի որ քամին չտանի նրա շունչը, հո-
ղը քաշի, ի՞նչ թաղաւութ ունի։ Հարիր օր ապրած,
հարիր տարի, մէկ օրվայ, մէկ սնաթի լաւութիւնն ա
յեշվում։ Հողը եդ չի պատվիլ, ինչ կերել, խմել ենք։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ-ԱՊՇ.ССР
Ա. ՍՍՄ. Ա. ՄՏՍՈՒՅԱՆ
Ա. ՍԱՄՍՈՒՅԱՆԻ ԱՆՎԱՆ

«Ազգային գրադարան»
NL0320549

ԻՐԱՒՈՒՆՔԸ ՎԵՐԱՊԱՀՈՒԱԾ Է.

16. 914